ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

20.05.2026թ.
Ժամը 12 [40]

Մասնակցում էին՝

Նախագահ՝

- ՀՀ ՊՆ Ս և ՏԱՎ ՀՀՍԾ ԿՊ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ՝ Հ. Զաքարյան,

Գնահատողներ՝

- ՀՀ ՊՆ Ս և ՏԱՎ ՀՀՍԾ ԿՊ բաժնի հաշվառման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ՝ Ա. Գևորգյան,

Բացակայում է՝

- ՀՀ ՊՆ Ս և ՏԱՎ ՀՀՍԾ ՇՎ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ՝ Ն. Ղուկասյանը:

Գնումները համակարգող՝ ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ք. Դարբինյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ք. Դարբինյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2 , դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ք. Դարբինյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	« ՀԼԼԱՆ ԲԵՋԱՆՅԱՆ ՏՈՖԻԿԻ» ԱՁ
2	«Ինտերսերվիս Պլյուս» ՍՊԸ
3	«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ
4	«Հայանտառ » ՊՈԱԿ
5	«ՍԱՄՎԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ ՎԵՄԻՐԻ» ԱՁ
6	«ՎԵՆԿՈ ԱԼՏԵԿՈ» ՍՊԸ
7	«ՎԻԳՄԵՏ» ՍՊԸ
8	«ԲԻԷՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ք. Դարբինյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող, բացառությամբ «ԲԻԷՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի, «ՎԵՆԿՈ ԱԼՏԵԿՈ» ՍՊԸ-ի, «ՎԻԳՄԵՏ» ՍՊԸ-ի և «ՍԱՄՎԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ ՎԵՄԻՐԻ» ԱՁ-ի: «ԲԻԷՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր՝ Հավելված 1.1-ում բացակայում է ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի Հավելված 1-ը և Հավելված 2-ը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերում որպես «ԲԻԷՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն նշված է Մ. Բուդաղյանը, սակայն փաստաթղերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատել է Նարինե Գիշյանը, այնինչ ձեր կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերում բացակայում է վերջինիս նման իրավասությամբ օժտելու լիազորագիրը, ուստի անհարժեշտ է շտկել անհամապատասխանությունը և ներկայացնել Նարինե Գիշյանին, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, նման լիազորությամբ օժտելու վերաբերյալ լիազորագիրը: «ՎԵՆԿՈ ԱԼՏԵԿՈ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր՝ Հավելված 1.1-ում բացակայում է ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի Հավելված 1-ը և Հավելված 2-ը: , «ՎԻԳՄԵՏ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր՝ Հավելված 1.1-ում բացակայում է ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի Հավելված 2-ը: «ՍԱՄՎԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ ՎԵՄԻՐԻ» ԱՁ-ի հայտով ներկայացված փաստաթղթերում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր՝ Հավելված 1.1-ում սխալ է նշված ընթացակարգի ծածկագիրը, չափաբաժնի համարը,ինչպես նաև բացակայում է ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի Հավելված 2-ը:Միաժանակ տեղեկացնում եմ նաև, որ փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 20.05.2026թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: 26.05.2026թ. շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ԲԻԷՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն, «ՎԵՆԿՈ ԱԼՏԵԿՈ» ՍՊԸ-ն, «ՎԻԳՄԵՏ» ՍՊԸ-ն և «ՍԱՄՎԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ ՎԵՄԻՐԻ» ԱՁ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումը,որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ք.Դարբինյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	գնման գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման գինը) /ՀՀ դրամ/	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների անվանումները	գնային առաջարկները /ՀՀ դրամ/ առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	Փայտե արկղեր /122 մմ ՌՍ հրթիռի արկղ/	հատ	1 000	24 000 000	«ԷԼԼԱՆ ԲԵՋԱՆՅԱՆ ՏՈՖԻԿԻ» ԱՁ	13 999 000	2 799 800	16 798 800
					«Ինտերսերվիս Պլյուս» ՍՊԸ	18 241 666.7	3 648 333.3	21 890 000
					«Հայանտառ »	19 850 000	3 970 000	23 820 000

					ՊՈԱԿ			
					«ՎԵՆԿՈ ԱԼՏԵԿՈ» ՍՊԸ	20 000 000	4 000 000	24 000 000
					«ԲԻԷՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	29 000 000	5 800 000	34 800 000
2	Փայտե արկղեր / ինքնաձիգի արկղ /	հատ	400	15 900 000	«Հայանտառ » ՊՈԱԿ	11 200 000	2 240 000	13 440 000
					«Ինտերսերվիս Պլյուս» ՍՊԸ	11 583 333.3	2 316 666.67	13 900 000
					«ՎԻԳՄԵՏ» ՍՊԸ	12 560 000	2 512 000	15 072 000
					«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ	12 660 000	2 532 000	15 192 000
					«ԲԻԷՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	12 800 000	2 560 000	15 360 000
					«ՎԵՆԿՈ ԱԼՏԵԿՈ» ՍՊԸ	13 250 000	2 650 000	15 900 000
					«ՍԱՄՎԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ ՎԵՄԻՐԻ» ԱՁ	13 800 000	0	13 800 000

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներից «ՍԱՄՎԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ ՎԵՄԻՐԻ» ԱՁ-ն չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացառությամբ «Ինտերսերվիս Պլյուս» ՍՊԸ-ի, մասնակցի ներկայացրած հայտի գնային առաջարկ՝ Հավելված 2-ում առկա է անհամապատասխանություն, չի համապատասխանում Արժեքի (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ-ի սյուներում նշված թվերի գումարը չի համապատասխանում Ընդհանուր գինը սյունակի թվին, ուստի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Ինտերսերվիս Պլյուս» ՍՊԸ -ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով:

3.3 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն կազմակերպվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ք.Դարբինյան)

4.1 29.05.2026թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ընտրված մասնակիցներ ճանաչվեցին՝ 1-ին չափաբաժինների մասով «ԷԼԼԱՆ ԲԵՋԱՆՅԱՆ ՏՈՖԻԿԻ» ԱՁ-ն, 2-րդ չափաբաժինների մասով «Հայանտառ » ՊՈԱԿ -ը:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնացին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ք. Դարբինյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող /ԳԱՊ/	Հ. Զաքարյան
Գնահատող	Ա. Գևորգյան
Գնումները համակարգող՝	Ք. Դարբինյան